https://doi.org/10.52027/18294685-gnh2024.1

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵ
«Իրավական նախաձեռնությունների կենտրոն»
հասարակական կազմակերպություն

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ քրեակատարողական հիմնարկ, գրադարան, գրքեր, ընթերցասրահ, ընթերցանություն, ազատազրկված անձ, դատապարտյալ, վերասոցիալականացում։

Keywords: penitentiary institution, library, books, reading room, reading, prisoner, convict, resocialization.

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ պատժի նպատակներն են վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները [ՀՀ քրեական օրենսգիրք, 2021]։ Դատապարտյալների վերասոցիալականացումը, նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորումը և նոր հանցագործությունների կանխումն ամրագրված են նաև որպես ՀՀ քրեակատարողական օրենսդրության նպատակներ։ Դատապարտյալների վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման նպատակով իրականացվող աշխատանքը ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է որպես գործունեություն, որն ուղղված է դատապարտյալների սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը։ Վերասոցիալականացման աշխատանքների կազմակերպման և դատապարտյալների օգտակար զբաղվածության ապահովման համատեքստում կարևորվում է քրեակատարողական հիմնարկներում համապատասխան պայմանների, այդ թվում՝ գրադարանների ստեղծումը [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]։ Գրադարաններին հասանելիություն ունենալը կարևոր նշանակություն ունի ոչ միայն դատապարտյալների, այլև կալանավորված անձանց համար։ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, կալանավորված անձանց ևս պետք է իրենց ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու հնարավորություն ընձեռվի [«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, 2002]։ Լայն առումով, գրադարանները նպաստում են ազատազրկված անձանց[1] կրթության և տեղեկատվության ազատության իրավունքի իրացմանը, արդյունավետ զբաղվածության և արտաքին աշխարհի հետ կապի ապահովմանը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, պայմաններ են ստեղծում նրանց ստեղծագործական և մշակութային նախասիրությունների բավարարման, անձնական աճի և զարգացման համար։

Գրքեր կարդալու և այդ համատեքստում դատապարտյալների վերասոցիալականացմանը նպաստելու կարևորությունն ընդգծվում է ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում, որոնք առավել հայտնի են որպես Նելսոն Մանդելայի կանոններ։ 40-րդ կանոնի համաձայն՝ «Յուրաքանչյուր բանտ պետք է գրադարան

[1]Ազատազրկված անձինք հասկացությամբ մատնանշում ենք կալանավորված անձանց և դատապարտյալներին։ Կալանավորված անձինք նրանք են, ովքեր մեղադրվում են հանցագործություն կատարելու մեջ և որոնց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը։ Դատապարտյալները նրանք են, որոնց նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ։ Անձինք ազատազրկվում, այսինքն՝ հայտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը կամ որպես պատժի տեսակ ընտրվում է ազատազրկումը՝ կարճաժամկետ ազատազրկում, ազատազրկում և ցմահ ազատազրկում։

ունենա, որը պետք է հասանելի լինի բոլոր կատեգորիաների բանտարկյալների համար և պարունակի ինչպես ժամանցային, այնպես էլ կրթական բովանդակությամբ գրքեր: Պետք է խրախուսել բոլոր բանտարկյալների գրադարանից օգտվելը» [Միավորված Ազգերի Կազմակերպության՝ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ), 2015]: Եվրոպայի խորհրդի թիվ (2006)2 հանձնարարականը նշում է, որ յուրաքանչյուր հիմնարկ պետք է ունենա բոլոր բանտարկյալների օգտագործման համար նախատեսված գրադարան, որը պետք է համարժեքորեն ապահովված լինի և ժամանցի, և կրթական տարաբնույթ տեղեկություններով, գրքերով և այլ միջոցներով: Պետք է խրախուսել, որ բանտարկյալներն օգտվեն գրադարանից, որի գործունեությունը հնարավորության դեպքում պետք է կազմակերպված լինի հանրային գրադարանային ծառայությունների հետ համագործակցությամբ [Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական բանտային կանոնների մասին», 2006]:

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկները[2], բացառությամբ «Աբովյան» և «Սևան» ՔԿՀ-ների, ունեն 1-ական գրադարաններ: «Աբովյան» ՔԿՀ-ն ունի 1 հիմնական և 2 տեղամասային, «Սևան» ՔԿՀ-ն՝ 1 աշխարհիկ և 1 հոգևոր գրադարան: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը ներկայացնում ենք ստորև.

- «Աբովյան» ՔԿՀ-ի հիմնական գրադարանը տեղակայված է ակումբի շենքում, տեղամասային գրադարաններից մեկը՝ 1-ին մասնաշենքում, որը նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար, իսկ մյուսը՝ 3-րդ մասնաշենքում, որը նախատեսված է կալանավորված և ազատազրկման դատապարտված անչափահասների, կալանավորված, բարձր անվտանգային գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար[3]:
- «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 5-րդ մասնաշենքում, որը կացարանային տեսակի շենք է և նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների համար:
- «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է մասնաշենքերից դուրս առանձին տարածքում:
- «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 1-ին հարկում:

---

[2]Քրեակատարողական հիմնարկն այն վայրն է, որն ապահովում է կալանավորման՝ որպես խափանման միջոցի, և ազատազրկման՝ որպես պատժի տեսակի կատարումը: Հայաստանի քրեակատարողական հիմնարկները 10-ն են և գործում են Քրեակատարողական ծառայության, իսկ վերջինս՝ Արդարադատության նախարարության ենթակայության ներքո: «Աբովյան» ՔԿՀ-ն նախատեսված է կանանց և անչափահասների համար, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն միակ մասնագիտացված բուժհաստատությունն է քրեակատարողական համակարգում, որտեղ ազատազրկված անձինք տեղափոխվում են իրենց բուժումը մյուս քրեակատարողական հիմնարկների բուժմասերի պայմաններում կազմակերպելու անհնարինության դեպքում:

[3]Քրեակատարողական հիմնարկները բաղկացած են անվտանգային գոտիներից՝ ցածր, միջին և բարձր, որոնցից յուրաքանչյուրն ունի մեղմ և խիստ պայմաններ: Ցածր անվտանգային գոտում պատիժ են կրում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած դատապարտյալները: Միջին անվտանգային գոտում պատիժ են կրում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած և 10 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում: Բարձր անվտանգային գոտում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

•«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է հիմնարկի բնակելի գոտու թերապևտիկ և հոգեբուժական բաժանմունքների բակային հատվածի առանձնացված մասնաշենքում:

•«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն կազմված է 1 մասնաշենքից, իսկ գրադարանին հատկացված է առանձին տարածք:

•«Նուբարաշեն» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 7-րդ մասնաշենքի 1-ին հարկում, որտեղ պահվում են միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող այն դատապարտյալները, ովքեր ընդգրկված են հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում:

•«Սևան» ՔԿՀ-ի հիմնական գրադարանը տեղակայված է 5-րդ մասնաշենքում, իսկ հոգևոր գրադարանը՝ եկեղեցուն կից:

•«Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 1-ին հարկում:

•«Վարդաշեն» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է կացարանային տեսակի մասնաշենքերից մեկում, որը նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների համար:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի համաձայն՝ միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում և ցածր անվտանգային գոտում գրադարանին կից կազմակերպվում է ընթերցասրահ, որտեղ նշված պայմաններում պատիժ կրող դատապարտյալները կարող են օրվա կարգացուցակով իրենց հատկացված ազատ ժամերին զբաղվել ընթերցանությամբ [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում 1-ին մասնաշենքի գրադարանը ծառայում է որպես ընթերցասրահ: 3-րդ մասնաշենքում կանայք և անչափահասներն ընթերցանությամբ զբաղվում են իրենց պահման խցերում: «Արթիկ» ՔԿՀ-ում գրադարանը ծառայում է նաև որպես ընթարցասրահ, որտեղից օգտվում են 5-րդ մասնաշենքում պատիժ կրող դատապարտյալները: Մյուս մասնաշենքերում, որոնք խցային տեսակի են, ընթերցանությունը կազմակերպվում է խցերում: «Սևան» ՔԿՀ-ում որպես ընթերցասրահ ծառայում է եկեղեցուն կից գործող գրադարանը: Իսկ այն անձինք, ովքեր չեն ցանկանում օգտվել ընթերցասրահից, իրենց կացարաններում են զբաղվում ընթերցանությամբ: «Վարդաշեն» ՔԿՀ-ում որպես ընթերցասրահ ծառայում է գրադարանը, որտեղից օգտվում են գրադարանի տեղակայման մասնաշենքում պատիժ կրող դատապարտյալները: Մյուս մասնաշենքերում, որոնք խցային տեսակի են, ազատազրկված անձինք խցերում են զբաղվում ընթերցանությամբ: Ազատազրկված անձինք խցերում են ընթերցանությամբ զբաղվում նաև «Արմավիր», «Գորիս», «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում, քանի որ այդ հիմնարկներում գրադարաններին կից ընթերցասրահներ նախատեսված չեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ հիմնարկներում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններ և ցածր անվտանգային գոտի նախատեսված չեն: Իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում ընթերցանությունը կազմակերպվում է զրուցարաններում կամ հիվանդասենյակներում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր քրեակատարողական հիմնարկներում տեղակայված են գրադարաններ, սակայն, մեր դիտարկմամբ, մտահոգության տեղիք է տալիս այն, որ դրանք հավասարապես հասանելի չեն ազատազրկված բոլոր անձանց: Դա վերաբերում է գրադարանների տեղակայման մասնաշենքերից դուրս այլ մասնաշենքերում, այդ թվում՝ կարանտինային բաժանմունքներում, պատժախցերում և բժշկական ստորաբաժանումներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին: Մտահոգիչ է այն, որ գրադարանները հիմնականում փոքր սենյակներ են՝ համալրված գրքերով և գրապահարաններով, սեղանով և մի քանի աթոռով: Դրանք հիմնականում վերանորոգված չեն, ապահովված չեն ջեռուցման և օդափոխության համակարգերով, չունեն բավարար նյութատեխնիկական միջոցներ, այդ

թվում՝ համակարգիչներ, ինչը բացասաբար է անդրադառնում ընթերցանության վրա։ Ավելին, «Աբովյան» ՔԿՀ-ի 3-րդ տեղամասի գրադարանը հոգեբանի աշխատասենյակն է, իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի գրադարանում տեղակայված են տեսակապի համակարգիչը և հեռախոսային հանգույցը, որոնց միջոցով ազատազրկված անձինք կապ են պահպանում իրենց հարազատների և ընտանիքի անդամների հետ։ Միևնույն ժամանակ հոգեբանն այնտեղ է ընդունելություն կատարում։ Բացառություն են կազմում «Արմավիր» ՔԿՀ-ի և «Սևան» ՔԿՀ-ի հոգևոր գրադարանները, որոնք համեմատաբար ընդարձակ են և ծառայում են որպես տարաբնույթ միջոցառումների կազմակերպման վայր։ «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանն ապահովված է համակարգիչներով, որոնց միջոցով հավաքածուները թվայնացվում են։ Մտահոգիչ է նաև այն, որ նախատեսված չեն երկրում գործող գրադարանների հետ համագործակցության ընթացակարգեր, ինչը նվազեցնում է ազատազրկված անձանց՝ գրադարանային որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորությունը։

Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործող յուրաքանչյուր ազատազրկված անձ իրեն հասկանալի լեզվով ծանոթացվում է իր իրավունքներին և պարտականություններին, այդ թվում՝ գրադարանից օգտվելու իրավունքին։ Սակայն կարևոր է, որպեսզի գրադարանից օգտվելու իրավունքի մասին ծանուցելուն զուգահեռ ազատազրկված անձանց համապարփակ տեղեկատվություն տրամադրվի գրադարանների կողմից առաջարկվող ծառայությունների և դրանցում առկա ռեսուրսների մասին, ինչը ներկայումս չի կատարվում։

Գրքերից, ամսագրերից և թերթերից օգտվելու կարգը և պայմանները սահմանում է քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը, որի համաձայն՝ գրքերի և ամսագրերի փոխանակությունն իրականացնում է գրադարանավարը՝ ազատազրկված անձանց կողմից տրված պատվերների հիման վրա։ Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում և ցածր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալները կարող են այցելել գրադարան և վերցնել իրենց նախընտրած գրականությունը՝ կացարանում կամ ընթերցասրահում կարդալու համար։ Բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալներին, ինչպես նաև կալանավորված անձանց ներկայացվում է գրադարանում առկա գրականության ցանկը, որտեղից ընտրում են իրենց նախընտրած գրականությունը, որը տրամադրվում է գրադարանավարի կողմից կամ նրանց զբոսանքի ժամին ուղեկցում են գրադարան՝ գրականությունն անձամբ վերցնելու համար [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]։

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է նաև բաժանորդագրությամբ ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից օգտվելու ընթացակարգ։ Ազատազրկված անձինք այդ նպատակով դիմում են քրեակատարողական հիմնարկի պետին։ Բաժանորդագրության ձևակերպումը կատարում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը։ Բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է ազատազրկված անձանց անձնական հաշվից։ Բաժանորդագրությունը ձևակերպվում է ազատազրկված անձանց անունով՝ քրեակատարողական հիմնարկի փոստային հասցեով [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]։ Մինչդեռ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն, ազատազրկված անձինք նշված ընթացակարգով գրականությունից կամ պարբերական մամուլից օգտվելու համար վերջին տարիներին դիմումներ չեն ներկայացրել, ինչի պատճառները չեն ուսումնասիրվել։

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկների գրադարաններից օգտվելուն, ապա մեր կողմից արձանագրված խնդիրները վերաբերում են գրացուցակների կազմմանը և գրքերի սպասարկման կազմակերպմանը։ Մեզ տրամադրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ քրեակատարողական հիմնարկների գրադարաններում առկա են հիմնականում թղթային գրացուցակներ, որոնք կազմում են գրադարանավարի

գործառույթ կատարող դատապարտյալները կամ հիմնարկների աշխատակիցները։ Գրացուցակները կազմվում են ըստ ժանրերի։ Ընթացակարգը փոքր-ինչ այլ է «Արմավիր» ՔԿՀ-ում։ Այնտեղ գրացուցակները թվայնացվել են և տրամադրվել հիմնարկի բոլոր մասնաշենքերին։ Ըստ այդմ՝ դատապարտյալը կամ կալանավորված անձը, ծանոթանալով գրքերի ցանկին, հիմնարկի աշխատակցի միջոցով ձեռք է բերում իր ընտրած գիրքը։ Մինչդեռ պարզել ենք, որ միջհիմնարկային սպասարկման, գրացուցակների և գրքերի սպասարկման միասնական թվային համակարգ ներդրված չէ, ինչն ազատազրկված անձանց հնարավորություն կտա առցանց որոնում կատարել կամ հասանելիություն ունենալ գրադարանների տեղեկատվական շտեմարաններին։ Այս համատեքստում դրական միտում է այն, որ հաշվի առնելով հիմնարկներում ըստ կարիքների և նպատակայնության թղթային տարբերակով գրքերը համալրելու, հետագայում գրքերի պահման և խնամքի բարդությունները՝ Քրեակատարողական ծառայությունը ծրագրում է հիմնարկներում էլեկտրոնային գրադարան ներդնել՝ բազմազան, բազմաոլորտ և տարալեզու գրականության հասանելիությունն առավել դյուրին դարձնելու նպատակով։

Պարզել ենք նաև, որ գրադարանից օգտվող ազատազրկված անձանց ընթերցողական քարտեր չեն տրամադրվում։ Փոխարենը կա հաշվառման մատյան, որտեղ նշվում են ազատազրկված անձի անունը, ազգանունը, տրամադրված գրքի անվանումը, տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ գիրքը վերադարձնելուց հետո՝ վերադարձի օրը, ամիսը, տարեթիվը։ Մտահոգիչ է այն, որ առկա չէ տրամադրված գրքերի և գրադարանից օգտվող ազատազրկված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու միասնական մոտեցում, թեև բոլոր գրադարաններում առկա են հաշվառման մատյաններ։ Ըստ քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Աբովյան» ՔԿՀ-ում ազատազրկված անձանց գրեթե 80 տոկոսը օգտվում է գրադարաններից։ «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանից ներկայումս օգտվում է մոտ 200, «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանից՝ 106 ազատազրկված անձ։ «Սևան» ՔԿՀ-ում գրադարանից ամսական կտրվածքով օգտվում են միջինը 64 անգամ։ «Վանաձոր» ՔԿՀ-ում գրադարանից օգտվող անձանց թիվը ամսական կտրվածքով կազմում է 20 ազատազրկված անձ։ Գրադարանից օգտվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն տրամադրվել «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների կողմից։ «Երևան-Կենտրոն» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներից տեղեկացրել են, որ գրադարանից օգտվող ազատազրկված անձանց թվի հաշվառում չի կատարվում։ Մտահոգիչ է նաև այն, որ տրամադրված թվային տվյալներն արժանահավատ չեն, քանի որ հիմնականում ներկայացնում են ոչ թե գրադարանից օգտվող անձանց, այլ գրադարանից յուրաքանչյուր անգամ օգտվելու թիվը, այնինչ 1 ազատազրկված անձը կարող է գրադարանից մի քանի անգամ օգտվել։ Հետևաբար հնարավոր չէ հստակ պատկերացնում կազմել գրադարանից օգտվող ազատազրկված անձանց վիճակագրության մասին։

Համադրելով քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ նկատել ենք, որ գրադարանից վերցված գրքերն ուշ վերադարձնելու, դրանք վնասելու կամ կորցնելու դեպքերի համար որևէ ընթացակարգ նախատեսված չէ։ Քրեակատարողական ծառայությունից պարզաբանել են, որ գրադարանի գիրքը հիմնարկի գույքն է, հետևաբար ազատազրկված անձինք պարտավոր են խնամքով վերաբերվել դրան, հակառակ դեպքում կարող են ենթարկվել օրենքով սահմանված պատասխանատվության։ Այնինչ նման դեպքերի համար կարելի է դիտարկել գրադարանից օգտվելու հնարավորության ժամանակավոր սահմանափակում, վնասված կամ կորցրած նյութերն այլ նյութերով փոխարինելու տարբերակ, ինչը պատժիչ բնույթ չի կրում, ըհդհակառակը, կարող է բարձրացնել գրադարանից օգտվելու գործընթացի նկատմամբ պատասխանատվության և հարգանքի զգացողությունը։

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ քրեակատարողական հիմնարկներում գրադարանավարի հաստիք նախատեսելու և այն համալրելու հարցում ևս առկա չէ

միասնական մոտեցում։ Որոշ հիմնարկներում («Աբովյան», «Գորիս», «Երևան-Կենտրոն» և «Վանաձոր») գրքերի տրամադրման գործընթացը կատարում են այդ հիմնարկների Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աշխատակիցները։ Մտահոգիչ է այն, որ այս դեպքում ևս մոտեցումը միասնական չէ։ Օրինակ, կան հիմնարկներ, որտեղ այդ աշխատանքը բաշխված է նշված բաժնի աշխատակիցների միջև («Աբովյան», «Գորիս»)։ Կան նաև հիմնարկներ, որտեղ այդ բաժինների ավագ մասնագետները հիմնարկի պետի կողմից նշանակվել են որպես պատասխանատուներ («Երևան-Կենտրոն», «Վանաձոր»)։ Մյուս հիմնարկներում գրադարանավարի գործառույթները կատարում են հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում չվարձատրվող («Արթիկ», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Սևան» ՔԿՀ-ներ) և վարձատրվող («Արմավիր», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներ) հիմունքներով ներգրավված դատապարտյալները։

Ստորև ներկայացնում ենք քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը.

- «Արթիկ» ՔԿՀ-ում գրադարանի բարեկարգման, գրքերի հաշվառման, այլ մասնաշենքեր գրքերի մատակարարման աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատվող աշխատանքներում ընդգրկված ցմահ դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում։
- «Արմավիր» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում բարձր անվտանգության գոտու մեղմ պայմաններում։ Վարձատրության չափը հաշվարկվել է շաբաթական 20 աշխատանքային ժամով։ Հիմնարկի պետի հրամանով՝ գրադարանի աշխատանքների վերահսկողությունը հանձնարարվել է Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր սոցիալական աշխատողին։
- «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում գրադարանի բարեկարգման, գրքերի հանձնման, ընդունման և համապատասխան մատյանում հաշվառման աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում։ Գործընթացը վերահսկվում է հիմնարկի Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի կողմից։
- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում։ Վարձատրությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով։
- «Սևան» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում։
- «Վարդաշեն» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում։ Վարձատրության չափը կազմում է ամսական 75.000 ՀՀ դրամ։

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ հիմնարկների Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աշխատակիցները գրքերի տրամադրման

գործառույթը համատեղում են իրենց հիմնական աշխատանքային գործառույթների հետ, ինչի համար առանձին համ հավելյալ վարձատրություն նախատեսված չէ: Մյուս կողմից դա կարող է հանգեցնել աշխատանքային ծանրաբեռնվածության կամ գրքերի սպասարկման հարցում հապաղումների: Գրադարանավարի աշխատանքը դատապարտյալների կողմից կատարվելու դեպքում տվյալ հաստիքը կարող է թափուր մնալ, քանի որ տվյալ դատապարտյալի՝ պատժի հետագա կրումից ազատվելու դեպքում այդ աշխատանքում այլ դատապարտյալ ներգրավելը որոշ ժամանակ է պահանջում: Բացի այդ, գրադարանավարի գործառույթը հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալների կողմից կատարելը կարող է սահմանափակել գրադարանների հասանելիությունը, քանի որ դատապարտյալներն այդ աշխատանքները կատարում են աշխատանքային ժամերին՝ օրական 2 ժամից ոչ ավելի ժամանակով [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]:

Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ գրադարանավարի գործառույթներ կատարող դատապարտյալներին ընտրելիս նկատի են առնվում նրանց ցանկությունը, անվտանգային գոտու տեսակը և պայմանը, կրթությունը, պատժի կրման ընթացքում դրսևորած վարքագիծը, անձնային որակները և այլն: Սակայն մտահոգիչ է այն, որ նախատեսված չեն գրադարանային գործի ուսուցման վերաբերյալ դասընթացներ, որոնք կսովորեցնեն այնպիսի հմտություններ, ինչպիսիք են գրացուցակներ կազմելը, գիրք վերցնելու և վերադարձի կանոնները և այլն: Մասնագիտական հմտություններին տիրապետելուց բացի կարևոր է նաև, որպեսզի գրադարանավարի գործառույթ կատարող դատապարտյալներն ունենան էմոցիոնալ գրագիտություն, սթրեսակայություն, համբերատարություն, անկողմնակալ վերաբերմունք դրսևորեն խոցելի խմբերի ազատազրկված անձանց նկատմամբ, ունակ լինեն հարգանք և հետաքրքրություն առաջացնել ընթերցանության նկատմամբ, ինչը, փաստորեն, ներկայումս հնարավոր չէ ապահովել:

Քրեակատարողական հիմնարկներից ստացված պաշտոնական տվյալների վերլուծության արդյունքում բացահայտել ենք, որ գրադարանները նոր գրականությամբ համալրելու հարցում չկա միասնական ընթացակարգ: Գրադարանները հիմնականում համալրվում են պետական կառույցների, հասարակական կամ կրոնական կազմակերպությունների, անհատների կողմից կատարված նվիրատվությունների միջոցով՝ բացառությամբ իրավական ակտերի, որոնք ձեռք են բերվում Քրեակատարողական ծառայության կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման ընթացակարգով: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը ներկայացնում ենք ստորև.

- «Աբովյան» ՔԿՀ-ում ընդհանուր առկա է 15.100 միավոր գրականություն: Գրադարանները վերջին անգամ համալրվել են 2019 թվականին՝ «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան կազմակերպության կողմից տրամադրվել է 455 միավոր գիրք:
- «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանում առկա է մոտ 4000 միավոր գրականություն: Այն վերջին անգամ համալրվել է 2024 թվականի փետրվարին: Կալանավորված անձանցից մեկի հարազատները գրադարանին են նվիրել գեղարվեստական և մասնագիտական 100 միավոր գիրք:
- «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանում առկա է 3300 միավոր գրականություն: Համալրումը կատարվում է հիմնարկի Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի կողմից՝ անհատների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում:
- «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանում առկա է 1258 միավոր գրականություն: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2017 թվականին Գորիսի համայնքապետարանի աջակցությամբ: Տրամադրվել է 150 միավոր գիրք: Քրեակատարողական ծառայության կողմից 2023 թվականին տրամադրվել է 5 միավոր գիրք, որից 2-ը՝ օրենսգիրք:

•«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է հայերեն և ռուսերեն շուրջ 2500 միավոր գրականությամբ, որոնք հիմնականում պատմական, արկածային, գեղարվեստական և փաստագրական ժանրերի են: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2023 թվականի օգոստոսին, ամերիկահայ գրող Նունե Փենի «Կյանքամեջում սղված երիտասարդություն» վերնագրով գրքերով:

•«Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի գրադարանում առկա է շուրջ 3000 միավոր գրականություն: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2018 թվականի մարտի 28-ին: «Լև Գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է 10 միավոր գիրք և գրքույկ:

•«Նուբարաշեն» ՔԿՀ-ի գրադարանում առկա է մոտ 2500 միավոր գրականություն: Գրադարանի համալրման և գրքերի ստացման վերաբերյալ հաշվառումներ չեն կատարվում:

•«Սևան» ՔԿՀ-ի 5-րդ մասնաշենքում գործող գրադարանում առկա է 3350 միավոր գրականություն, իսկ եկեղեցուն կից գործող հոգևոր գրադարանում՝ 31 միավոր: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 3 միավոր գրքով 2023 թվականի օգոստոսի 17-ին Նունե Փենի կողմից:

•«Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է մոտ 1300 միավոր գրականությամբ, որը վերջին անգամ համալրվել է 38 միավոր գրքով 2020 թվականի փետրվարին:

•«Վարդաշեն» ՔԿՀ-ի գրադարանում առկա են 4172 միավոր գրականություն, որից 2402-ը՝ օտարալեզու: Գրադարանը վերջին անգամ համալրվել է տարաբնույթ գրականությամբ՝ 50 միավոր գրքով 2020 թվականին ՀՀ քաղաքացու կողմից:

Կարևոր է, որպեսզի գրադարանների հավաքածուները համահունչ լինեն ազատազրկված անձանց կարիքներին, համապատասխանեն նրանց գրագիտության և կրթության աստիճանին, արտացոլեն նրանց ժողովրդագրական կազմը, հեղինակների կամ ժանրային նախասիրությունները և այլն: Գրքերից բացի հավաքածուները պետք է ներառեն հեշտ ընթերցվող նյութեր, ուղղագրական գրքեր, բառարաններ, թերթեր, առողջապահական տեղեկագրեր, օտարալեզու բառարաններ և տեղեկատու նյութեր, կրոնական թեմաներով գրականություն: Հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է հասանելի լինեն այլընտրանքային ձևաչափով նյութեր, այդ թվում՝ բրայլյան գրերով, գլխատառ կամ խոսող գրքերով, ենթագրերով և ժեստերի լեզվով տեսա-լսողական նյութերով: Գրադարանի հավաքածուները պետք է ներառեն տարեց անձանց, կանանց և տղամարդկանց, անչափահասների այդ թվում՝ մինչև 3 տարեկան երեխաների և նրանց ծնողների[4] առողջության պահպանմանը վերաբերող, հետաքրքրությունները, ընթերցանության և տեղեկատվական կարիքները բավարարող, տարիքային զարգացմանը և նախասիրություններին համապատասխանող գրականությամբ և տեղեկատվական այլ նյութերով: Խոշոր տառերով կամ աուդիո գրքերը պետք է հասանելի լինեն վատ տեսողություն ունեցող անձանց համար: Նրանց պետք է տրամադրվեն օժանդակ սարքեր, օրինակ, խոշորացույցներ կամ աուդիո-նվագարկիչներ: Կրթական ծրագրերում ընդգրկված անձինք, այդ թվում՝ անչափահասները, պետք է ապահովվեն մասնագիտական գրականությամբ, դասագրքերով և ուսումնառության հետաքրքրությունները բավարարող նյութերով: Այնինչ ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ համալրումները կատարելիս նկատի չեն առնվում ազատազրկված անձանց կարիքները: Ավելին, նվիրատվությամբ փոխանցվող նյութերի ընտրության չափանիշներ, դրանց գնահատման, ընդունման կամ մերժման, ինչպես նաև գրադարանների հավաքածուների թարմացման ընթացակարգեր նախատեսված չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է պոռնոգրաֆիկ և էրոտիկ նյութերին, որոնք ներառված են քրեակատարողա-

[4]Ազատազրկված ծնողը կարող է իր՝ մինչև 3 տարեկան երեխային պահել իր մոտ: Երեխայի 3 տարին լրանալուց հետո քրեակատարողական հիմնարկի պետը կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատժի ավարտին մնացել է 3 տարուց ոչ ավելի ժամանակ:

կան հիմնարկներում արգելված իրերի ցանկում։ Այսինքն՝ ազատազրկված անձինք չեն կարող դրանք ունենալ իրենց մոտ, ստանալ հանձնուքով կամ ծանրոցով [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]։

Ինչ վերաբերում է դատապարտյալների՝ պատժից ազատման նախապատրաստմանը, ապա քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար որոշ պարտականություններ են սահմանված։ Դա վերաբերում է պատժի կրման ավարտին մինչև 6 ամիս մնացած դատապարտյալներին, ովքեր տեղեկացվում են, որ ազատ արձակվելուց հետո կարող են դիմել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին և աշխատանքի տեղավորման հարցում սահմանված կարգով աջակցություն ստանալ։ Կենսաթոշակային տարիքի հասած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող դատապարտյալների խնդրանքով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նրա տվյալները ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն՝ տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն ապահովող սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամք ապահովելու նպատակով [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]։ Պատժից ազատմանը նախապատրաստելու փուլում երկրում գործող գրադարաններ ուղղորդելու ընթացակարգ ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ նախատեսված չէ։ Այնինչ կարևոր է, որպեսզի դատապարտյալները, հնարավորության դեպքում՝ նաև կալանավորված անձինք դուրս գան քրեակատարողական հիմնարկից՝ իմանալով, թե որտեղ և ինչ գրադարաններ կան, և իրենք ինչպես կարող են դրանցից օգտվել։ Դա կարող է ներառել տեղեկատվություն երկրում առկա գրադարանների և դրանցից օգտվելու կարգի մասին, գրադարանների հետ համագործակցության շրջանակներում ընթերցողական քարտի տրամադրում և այլն։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկներում գործում են գրադարաններ, որոնց աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ պետության կողմից քայլեր են ձեռնարկվում։ Սակայն դժվար է գնահատել, թե գործնականում ընթերցանությունն ինչպես է նպաստում ազատազրկված անձանց արդյունավետ զբաղվածության ապահովմանը, նրանց զարգացմանը և մասնագիտական կարողությունների պահպանմանը, քանի որ բացակայում են ընթերցանությունը խրախուսելու միջոցները և պայմանները։ Այն ներառված չէ ազատազրկված անձանց տրամադրվող խրախուսանքի միջոցների մեջ։ Առկա չեն նաև ընթերցանությունը խթանելուն ուղղված ծրագրերը կամ միջոցառումները։ Դա կարող է ներառել քրեակատարողական հիմնարկների գրադարանների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների հրատարակում և տարածում, գրադարանների հավաքածուների ցուցադրության կազմակերպում, համալրված նոր գրականության մասին իրազեկում, առավել հաճախ փոխառվող գրքերի ցանկի հրատարակում և տարածում։

Ամփոփելով՝ հավելենք, որ դեռևս 2018 թվականին Ազգային Ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանը Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու և գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյալին, որպես խրախուսանքի միջոց, սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացրել։ ՀՀ կառավարությունը, սակայն, բացասական դիրքորոշում է հայտնել նախագծով առաջարկվող իրավակարգավորումների կապակցությամբ՝ այն հիմնավորմամբ, որ, ըստ գործող օրենսդրության, ընթերցանությամբ պայմանավորված կարճաժամկետ մեկնում տրամադրելն առանձին վերցրած չի դիտարկվում որպես դատապարտյալների ուղղման միջոց, առաջարկվող կարգավորումը չի բխում կարճաժամկետ մեկնման ինստիտուտի գաղափարական էությունից, բացի այդ, հստակ չէ, թե ինչպես է գնահատվելու ընթերցանության անմիջական ազդեցությունը դատապարտյալի անձի կամ վարքագծի վրա, ինչ գրականության մասին է խոսքը, և որ գրքերն են, որ կարող են նպաստել դատապարտյալների սոցիալական վերականգնմանը [«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկություն, 2019]։

SUMMARY

This article examines the libraries and reading rooms in Armenian prisons, focusing on the impact of reading on inmates' lives. It addresses issues such as library regulations, catalog compilation, book maintenance, librarian duties, and book replenishment, while exploring methods to promote reading among prisoners. The study concludes that assessing the practical benefits of reading for inmates is difficult due to a lack of incentives, supportive conditions, and programs that encourage a reading culture within the prison system.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշում / Ընդունված է 2023 թվականի ապրիլի 13-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189318, 30.05.2024:
2. ՀՀ քրեական օրենսգիրք / Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191266, 30.05.2024:
3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք / Ընդունված է 2022 թվականի հունիսի 15-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189477, 30.05.2024:
4. «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկություն / Ներկայացված է 2019 թվականի մայիսի 30-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.gov.am/files/docs/3453.pdf, 30.05.2024:
5. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք / Ընդունված է 2002 թվականի փետրվարի 6-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175842, 30.05.2024:
6. Միավորված Ազգերի Կազմակերպության՝ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ) / Ընդունվել են 1955 թվականին, Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի կոնգրեսի կողմից։ Վերանայվել են 2015 թվականին, ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի կողմից, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://www.unodc.org/documents/justice-and-prison- reform/Nelson_Mandela_Rules-E-ebook.pdf, 30.05.2024:
7. Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական բանտային կանոնների մասին» / Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թվականի հունվարի 11-ին Նախարարների տեղակալների 952-րդ նիստի ընթացքում, Էլեկտրոնային հրատարակություն] URL: https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae, 30.05.2024: